

№ 4 Ульи 1891

№ 4

Մահազոյժ վկնատիաւ ՄԱԿԱՐ կաթուղիկոսի

Աղբիւրի գրականական ալբոմ, ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Զատիկ (ոտանաւոր)	Ս. Հախումեան
Զատկի գաղը	Ա. Օ.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, պատկեր	
Հովիւ (ոտանաւոր)	Յ. Կոստանեանց
Առէք, կերէք, այս է մարմին իմ, պատկեր	
Արշակի Զատիկը	Լէօ
Անտառ (ոտանաւոր)	Սրինգ
Փակուած ծաղիկը	Ա. Մինդրաբեան
Մանկանը (ոտանաւոր)	Ե. Յովհաննիսեան
Կոստիա Դումէու, պատկեր	
Քրեղերիկ Դուգլաս	Թարգմ. Օր. Ս. Սերկեբրակեանց

ԶԻՄԱՐՃԱԼԻՔ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Շարունակւում է ներկայ 1891 թ.
ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ բաժանորդագրութիւնը:

—

ԱՂԲԻՒՐԻ առաջիկայ № 5-ը լոյս կը տեսնի, ինչպէս միշտ, № 6-ի հետ յունիսի մէկին: Իսկ Մայիսի կիսին ԱՂԲԻՒՐԻ բոլոր բաժանորդներին կուղարկենք, յատկապէս ծնողների համար, նրա կրթական մասը:

—

Խնդրում ենք նրանց, որոնք դեռ չեն վճարել ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ թէ ներկայ եւ թէ անցեալ տարիների բաժանորդագինը, բարեհաճեն փութով հասցնել, հակառակ դէպքում ներկայ մայիսի 15-ից կը դադարացնի № №-ի ուղարկելը:

—

Նրանք, որոնք դեռ չեն ստացել 1891 թ. Ա ն ա ռ ա կ Ո ր ի ն, Ա. պրէմիան, կուղարկենք Զատկից յետոյ, որովհետեւ սպառուած է եւ կրկին պատուիրուած է ու Փարզից էլ ճանապարհուած:

ԱՊՐԻԼԻ ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԻՆ

առաւօտեան ժամը ութից քսան եւ երեք րոպէ անց

Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ՄԱԿԱՐ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԸ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՔՍԱՆ ԵՒ ԵՐԿՈՒՍԻՆ ԱՊՐԻԼԻ

Ա. ԷՀՄԻԱԾԻՈՒՄ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՎԵՀԱՓԱՌ

ՀԱՅՐԱՊԵՏԻ ԹԱՂՈՒՄԸ

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՆԴԱԿՐՈՒԹԻՒՆ ՏԱՐԻ

№ 4

Ա Պ Ր Ի Լ

ԹԻՓԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Գօղօլինսկի եւ Բարեւտինսկի փողոցների անկիւնում.
1891

† Սուրբ Գրիգորիս Վարդապետ

ԶԱՏԻԿ

Բշալոյսը բա-
ցաւ դռները,
Եւ դօղանջում են զանգակները,
Աւետում են բոլոր մարդոց՝
ՔՐԻՍՏՈՍ ԾԱՐՆԱՒ Ի ՄԵՌՆԼՈՑ:

Վեր կաց, մանուկ դու սիրասուն,
Տես աշխարհի ուրախութիւն,
Բնութեան միակ անկեղծ ընկեր,
Զմռռանաս դու իմ խօսքեր:

Խաղա այսօր զբաղարճացիր,
Բոլոր հոգով դու վազվըզիր.
Շատ զատիկներ պիտի տեսնես,
Շատ նոր բաներ դեռ կըսովորես:

Քայլիր ազատ, մըտիր դու կեանք,
Առաջ գնա միշտ համարձակ,
Նայիր առաջ, յետ չընայես,
Զի որ քաջ ես, դու վախկոտ չես:

Աստուած տուաւ քեզ մանուկ սիրտ,
Որ դու սիրես քո ընկերիդ.
Ճշմարտախօս, ազնիւ եղիր,
Խօսքը մարդկան ճակտին ասիր:

Ապրիր բոլոր քո կեղրովդ,
Ապրիր լցուած մանուկ ոյժով,
Եւ աւետիր դու միշտ մարդոց՝
ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՆԱԻ Ի ՄԵՌՆԵԼՈՑ:

Ս. Հախտահան

ԶԱՏԿԻ ԳԱՌԸ

I.

Շատ հինգշաբթի օրն է, դիւղի մէջ, թէ մեծ և թէ փոքր, բոլորն էլ պատրաստութիւն են տեսնում Զատկին դիմաւորելու։ Աշխատասէր տղամարդիկ ամբողջ եօթ շաբաթուայ ընթացքում կոպէկ-կոպէկ ժողոված փողերով՝ ուրախ ժպիտը երեսներին՝ նոր-նոր շորերի և ուտելեղէնի պատրաստութիւն են տեսնում։ օրիորդները տանը նստած՝ ձևում են ու կարում։ իսկ կանայք՝ կամ տունն են վեր քաղում, սրբոտում, կամ տեղաշորերն են դուրս գցել թաւ տալիս, կամ թէ չէ՝ խմոր են հունցում Զատկի գաթայ թխելու և զանազան համեղ խմորեղէններ պատրաստելու։ Ուրախ են մինչև անգամ և հաւերը՝ կըչկչալով ձու են ածում և դեռ բնական վրայից չվերկացած,

փոքրիկ մանուկները նոր, խըշխշան շորերը հագած, դունչ ու պռունկ ձւի կարմիր ներկով ներկած, վազում են հաւաքոնը և հաւին փախցնելով, վերցնում են ներկած տոպ տոպ ձուն և վազում են եկեղեցու բակը ձու խաղալու։ Ուրախ են նոյնպէս աղքատները և չքաւորները, որ Զատկի պատճառով, առատաձեռն ողորմութիւն կըստանան բարեպաշտ քրիստոնեաներից և քաղցած փորները կըկշտացնեն։ Միայն տխուր է մեր բրդոտ ոչխարը. խեղճն արտասուքն աչքերին՝ թէ հանդում և թէ գիւղի մէջ բառաչելով, մեկտեղից միւս տեղն է վազում և անդադար իր պառնուկին կանչում։

«Իմ սիրուն պառնուկ,
Ո՞ւր ես գնացել,
Ծիծս պըրտէպըռունկ
Քեզ կաթ եմ բերել,
«Որ կուշտ կուշտ ուտես
Էս իմ քաղցր կաթ.
Ուտես ու փքուես,
Իմ սիրուն, Հոպեակ»։

Բայց պառնուկն իր մօր ձայնը չի լսում. նրան յաւիտեան բաժանել են մօրից, նրան տարել են քաղաք ծախելու։

II.

Աւագ շաբաթ օրն է։ Ամբողջ գիւղը իւղի անուշ հոտով լցւած է։ Բոլոր տներում կնանիք կռնները վեր քաշած, աւանց Հանգստանալու, թաթախման պատրաստութեան են տեսնում։ Մէկ կողմից զանազան գոյների միջից հանում են գոյնզգոյն ներկած ձւեր, իսկ միւս կողմից՝ ձուկ են տապակում կամ խորոված, փլաւի խաշած բրինձն են քամում, կամ թէ չէ՝ փլաւի այանդը՝ չամիչ, հիւր, նուշ և այլն... իւղի մէջ տապակում, պատրաստում։ Բոլորն էլ մեծ ու փոքր զուգւած, զարդարւած՝ սպասում են երեկոյեան ժամերգութեան։

Հէնց այդ ժամանակ մի փոքրիկ, սպիտակ գառն, փոքրիկ երեխաների ձեռքից մոլորւած, մէկ տներից մըլ քըլելով՝ միւս տներն է վազում և աչքերն արտասուքով լի՝ խղճալի ձայնով բղաւում։

«Մայրիկ ջան, մայրիկ,
Ո՞ւր ես, ինձ լսի,
Գո խեղճ գառնուկին
Արի, ազատի.
«Այս չար երեխայք
Ինձ չարչարում են,

Դռնից դէպ սենեակ
Ինձ հալածում են։

—Հայրիկ, այս ինչ է ասում գառնուկը, հարցրեց փոքրիկ մանուկը գառնալով դէպի իր հայրը։

—Որդի, գա ասում է՝ Զատիկը գալիս է, շուտ արէք՝ իմ շինքը կարեցէք։

—Ինչո՞ւ, հայրիկ, մեղք է, տես՝ նա լաց է լինում, աչքերիցն արցունքներ են գլորւում։

—Ոչ, սիրելիս, նա ուրախանում է, որ այսօր պէտք է արժանանայ Քրիստոսին զոհ-ւելու և սուրբ գոհ կոչւելու։

—Հայրիկ, խնդրում եմ, մի մորթէք գրան։

— Ոչ, սիրելիս, դու դեռ փոքր ես, չես հասկանում, երբ մեծանաս՝ դու ինքդ կը-համաձայնես, որ Զատկին, այսինքն Յարու-թեան օրը տօնելիս, ոչ թէ այսպիսի գառ-ներ, այլ ոչխարներ և ասելի թանկագին զո-հեր պէտք է բերել...

Միւս օրն առաւօտեան, դեռ լոյս ու մութը չբաժանուած, դանակը սրեցին և խեղճ գառնուկին մորթեցին։

ս. օ.

Թռիատու յարեան ի մեղոց:

ՀԱՎԲԻ

Ս

արի վրայ, արձակ տեղում՝
Ջահել տղան թեք ընկած՝
Հով գիշերին արևգն հնչում՝
Քաղցր է փչում՝ բարձր ու ցած...

Լաւ է սարը պարզ գիշերին,
Գառն եռանդով արածում՝ է.
Կաթնուտ խոտը ըոյ է գցում՝
Ցօղը երկնից իջնում՝ է:

Իսկ հովիւըն արձակ տեղում՝
Հով՝ ու զով գրկի մէջ,
Սովորական խաղն է փչում՝
Տեւող ձայնով ու անվերջ:

Եւ երկնքում՝ աստեղալից
Իր նեղ օրն է մոռանում՝

Ու աստղերի փայլփայլմունքից
Իր ընկերին է յիշում:..

Դաշտավայրում՝ երկրագործը
Դրսում՝ պատկած քնում է,
Իսկ շարժմունքով նրա շուրջը
Բնութիւնը մնչում է:

Երկրագործի քունն է հանգիստ
Վաստակած ու խոնջ մարմնով,
Իսկ հովիւը սարի կրծքից
Դեռ չէ դադրել երգելով:

Նա երկնքում՝ աստեղալից
Իր նեղ ծրն է մոռանում,
Եւ աստղերի փայլփայլմունքից
Իր ընկերին է յիշում:..

Ց. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ԱՐՁԱԿԻ ՁԱՏԻԿԸ

·I.

ատիկ էր, թաթախման շաբաթի օրը:

Ապխալը սիրուն, քաղցրիկ օր էր տալ եւ ծիծաղում էր: Ծիծաղը ապարած աշխարհի մէջ էր երեւում: գետինը կանաչել էր, կանաչի մէջ հարիւր ու մի ծաղիկ էր . բացել, ծառերը ծաղկել էին, անուշ հոտ էին տարածում. ծիծեռնակը եկել էր, ըոյն էր շինում, ճոռում էր, պտոյտ տալիս, կայծակի պէս կըտըրում էր, դէս ու դէն անցնում: Բայց ամենից սիրուն ծիծաղը արեգակի ծիծաղն էր. պարզ ու կապոյտ երկինքում կանգնած էր արեգակը, ծիծաղում էր ծաղկած, զարդարուած աշխարհի վրայ: Նա ծանր էր գըննում, օրը շատ էր երկարացնում, որպէս զի հայ մարդիկ ժամանակ ունենան, ամեն ինչ պատրաստեն, ապրեն, ապաւեն, որ երբ ինքը մայր կըմտնի կապոյտ ապի, թաղծր անտառի ետեւում, ամենքը իրանց հայրենիքն անեն, կարմիր ձուն կոտրելով քեզան քանան եւ ասեն. „Քրիստոս յարեաւ ի մեռելոց“: Փոքրիկ երեխաներն այդ օրը շատ անհամբեր էին,

ամեն րոպէ արեգակին էին նայում, որ իմանան թէ նա շատ է հեռացել թէ չէ. արեգակի ծիծաղը իսկի նրանք չէին հասկանում: Բայց մեծ մարդկանց համար շատ լաւ էր, որ արեգակը փոքրիկների ուզածի պէս չէր շարժւում: դեռ շատ քան կար մեծերի համար եւ նրանք գնում, գալիս էին, տանում էին, բերում:

Ծներում մարդ չէր մնացել: Զատկական շուկան ամենքին էր քաշում, տանում դէպի ինքը: Նա կանչում էր ամեն մէկին, որ հայ-քրիստոնեայ է, որ եօթը շաբաթ ծանր պատ է պահել եւ իր երեխաների աչքին փող է խնայել այդ օրը մսխելու համար:

Արշակենց տանից դեռ մարդ չէր գնացել՝ զատկական շուկան. Արշակն ինքն էր ուզում գնալ, բայց նրան չէին թողնում. եւ հէնց դրա համար էր նա այնքան քաււում, լաց լինում, ոտները գետնին խփում:

Այդքան քանը նա անում էր իրանց բակում եւ ամբողջ թաղը լսում էր, թէ նա ինչ է պահանջում: Բակում նստած էր նրա հայրը, որի երկու աչքերը փակ էին. այդ խեղճը կոյր էր, նոր էր Աստուծու պատուհասի տակ ընկել: Եւ նա շատ չէր խօսում, իր երեխայի կամքին չէր հակառակւում, այլ իր երեսը ղէս ու ղէն էր դարձնում, բայց ի հարկէ, Աստուծու մեծ աշխարհի մի տերեւը, մի խոտը, մի հատ շող լոյսն էլ չէր տեսնում: դրանք բոլորը ղէնը մնան— չէր տեսնում իր երեխային, չէր իմանում, թէ ինչ ալէտ է այժմ նրա ղէմքը, նրա հասակը. վեց ամիս էր, որ նրա աչքերը փակւել էին եւ վեց ամիս նրա սիրտն ուզում էր Արշակին տեսնել, թէեւ նա իր մօտն էր, իրանից կպած, իր հետ էր խօսում: Որքան խեղճ մարդ էր... Այդ օրւայ արեգակը որքան ծիծաղէր, որքան հազարաւոր մարդկանց ուրախութեան թեւեր տար, բայց այս մի հատ խեղճ, աղքատ մարդու սըր-

տում՝ գիշեր էր, մութն, խաւար գիշեր: Նա հառաչում էր, նրա սիրտը ճաքում էր, նրա մազերը վեց ամսուայ ընթացքում ապիտակել էին: Աղքատ մարդ էր, այժմ լաւ հոգիտէր թէ ինչպէս է ապրում իր ընտանիքը, որի համար առաջ հոգի ու մարմին էր ինայել, աշխատել էր այնքան, որքան մի ժիր քարտաշն է կարող աշխատել:

Արշակը երեխայ էր, հօր արտինը շատ էր հասկանում, շարունակ քաւում էր, իրանն էր պահանջում: Իսկ նրա քոյրը, որ մեծացած աղջիկ էր, նրա աղաղակին ականջ չէր դնում:

Օրն անցնում էր, քաղաքի մէջ իրարանցումն շատանում էր. կասես թէ ողջ աշխարհը կանչում էր. „երեկոն մօտենում է, հա՜“...

Արշակի մայրը տուն եկաւ: Նա լացք էր անում հարեւան հարուստի տանը եւ թեւքերը վեր ծալած, գործը կիսատ թողած՝ եկել էր իր տունը տեսնելու: Ամենից առաջ, ի հարկէ, Արշակին տեսաւ: Ու իսկոյն նրա թեւից բռնեց, մազերը դրստեց, ձեռքով սրբեց նրա աչքերը:

—Ի՞նչ կայ, քեզ մատաղ, ի՞նչ ես այդքան քեզ սպանում: Այդքան լաց կըլինե՞ն... ախ, աչքերը ինչպէս կարմրել են, ինչքան է լաց եղել...

Արշակը մօր թեւից կպաւ, լուց, լաց էր լինում: Մայրն համբուրեց նրա ճակատը, զրկեց նրան: Ցետոյ կանչեց իր աղջկան, քարկացաւ նրա վրայ, հրամայեց որ Արշակի պահանջածը կատարէ:

—Էհ, դրանով էլ մենք մի քանի տէր չենք, բայց երեխաս այնքա՜ն լաց է եղել...

—Ի հարկէ, պատասխանեց նրա կոյր մարդը.— փառք Աստուծու... ի՞նչ պիտի անենք:

Աղջիկը տանից դուրս գնաւ մի հաւ եւ տաւ

Արշակին: Սա խակոյն տեղից վեր կացաւ, հաւը գըրկեց, էլ ականջ չդրաւ նրա կռնչոցին, փողոց վազեց:

II.

Մենակ այդ հաւն էր մնացել Արշակենց տանը: Մնացած աւելորդ բաները, ինչ որ եղել էր, ծախել էին, ձիւն-ձմեռ ժամանակ ապրել: Մօր աշխատածն էլ ծրագալոյսի էր գնում; մի-մի էլ հայի կամ շաքարի: Է՛հ, թէկուզ աղքատ, Աստուծու ապաստան մարդիկ էին, բայց նրանց սիրտն էլ ուզում էր մի երկու կաթիլ տաք հայ: Հաւն էլ մեծ պապի մի գլխից մինչեւ միւսը երեսուն երեք ծու էր ածել:

Լաւ հաւ էր, մի տարի էր, որ ապրում էր Արշակենց տանը: Նրան լաւ էին պահում; ամենքն իրանց բերանից կտրում էին, նրա կուտը անպակաս անում: Առանց նրան խակի ապրուստ չէր լինիլ, նա էլ այդ տանեցիներից մէկն էր դառել: Նրան ամենից շատ սիրողը Արշակն էր. երեկոները թաղից վերցնում էր, բերում, իր գոգում դնում, խաղում էր նրա հետ. ձեռքը քսում էր նրա գլխին, կարմիր կատաղը շոյում էր, հարիւր ու մի քաղցր խօսք էր ասում; մնատաղ էր գնում նրան. հաւը լուռ մնում էր նրա գոգում, շատ չէր ճղճղում եւ եթէ լեզու ու խելք ունենար, ինքն էլ անպատճառ Արշակին այնքան սիրուն խօսքեր կասէր. սովորել էր Արշակի գոգում կուտ ուտել, սովորել էր սուս ու փուս մնալ, երբ Արշակը նրան շարշարում էր: Հաւը Արշակինն էր. անունը դրել էին Արշակի հաւ եւ ոչ ոք իրաւունք չունէր ածած ծուն տեղից վերցնել. Արշակը պիտի գնար, տեսնէր ու ծուն տանէր, դնէր ամանում:

Բայց Արշակի բանն ու գործը մենակ հաւը չէր: Նա սովորում էր հայոց ուսումնարանում եւ մի օր էլ

դասից էէր ընկնում: Այնտեղ նրան ծրի էին դաս տալիս եւ մի մարդ էլ մի հատ գիրք էր առել, նրան տալիս: Նա լաւ էր կարդում, ուսուցիչը նրան հաւանում էր. բայց մի քանի պակաս էր, երբ սկսում էր գրութիւնը, նա մտում էր պարապ յետ նստած. թուղթ, գրիչ ու թանաք էէր ճարում նրա համար, քարէ տախտակ էլկար: Երեխան նստում էր, նայում իր ընկերներին, նախանձում էր, երբ տեսնում էր, որ ամենքը բարակ քարէգրչով հիւհիւկացնում են քարէտախտակի վրայ, գրում են ինչ որ ուսուցիչն է ասում:

Չատկի ուրբաթի իրիկունն էր, միւս օրը պիտի թաթախուէին. Արշակենց տանը, ինչպէս միշտ, շուտ քնեցին: Ճրագալոյսը քիչ էր մնացել, այնպէս պիտի պահէին, որ մնացածով մի երկու իրիկուն էլ կառավարուէին: Բայց Արշակը չքնեց: Նա ձեռք էր բերել մի կտոր սեւացած, կեղտոտ թուղթ, մի կտոր էլ մատիտ: Այդ իրիկուն հաւը մոռացել էր. Արշակը նրստած՝ իր վերջին դասն էր արտագրում այդ թղթի վրայ: Ողբալն ուրախանում էր նա իր ձեռքի աշխատանքով. որքան քաղցր բան էր մատիտով գրել թղթի վրայ եւ յետոյ գրածը կարդալ: Արշակը աշխարհի վրայ էլ բան չի ուզում: Նրա սրտի ուզածը հէնց այդ է: Բայց մայրը նրան հանգստութիւն չի տալիս. նա չի քնում, մինչեւ որ Արշակը չքնէ:

Ղեղճի տուն... իսկի մի բանի նման չես, տխուր ու աղքատ տուն... Երեխան այնպէս կրակ կտրած աշխատում է, այնպէս ուրախ է, բայց ցաւ ու կրակ... Նաւթը քիչ է կանթեղի մէջ: Մայրը ստիպում է, որ վեր կենայ քնէ, հրամայում է, անիծում է, բայց երեխան իր դասն է գրում, իր գրածն է կարդում եւ ծիծաղում է, որ այդպէս գրել է: Մայրը երկու անգամ ձրագը նրա առաջից քաշեց, բայց նա աղաչեց

ու կրկին ճրագն իր առաջը դրաւ: Քիչ էլ ապաւեց մայրը եւ ասաց.

—Եթէ այս րոպէին վեր չրկենաս, ես զօռով քեզ կրպատկեցնեմ:

Եւ նա ուզում էր տեղից վեր կենալ: Այդ որ տեսաւ Արշակը, ինքը վեր կացաւ, մօր ճտոմն ընկաւ եւ էլի աղաչեց, որ քիչ էլ ապասէ: Մայրը—ի՜նչ անէը—լռեց եւ հրամայեց որ շատ չընատէ, ինքը քնով անցաւ:

Գրում էր Արշակը: Թուղթը պրծնելու վրայ էր, բայց նա գրելուց չէր կշտանում: Ամեն մի տառը գրելիս ծիծաղում էր, ուրախ ուրախ գրածին էր նայում այս ու այն կողմից:

Յանկարծ ճրագի լոյսը նւազեց. այդ ժամանակ նա գլուխը բարձրացրեց, տեսաւ որ նաւթը վերջացել է եւ վախեց. շտապով վեր կացաւ, շորերը հանեց, ախ ու վաշ արաւ: Այդ ձայնի վրայ մայրը զարթնեց:

—Կէս գիշերից անց է եւ դու դեռ նստած ես, ասաց նա բարկացած.—նաւթը պրծել է, ա՛խ, Աստւած...

Արշակը լաց լինելով մոտաւ նրա ծոցը:—Կը քնէը մայրը, նրա մի աչքը արդէն փակւում էր, քնի զոհն էր գնում, բայց Արշակը չէր լռում, լաց էր լինում:

—Լա՛ւ, լա՛ւ, քնիր, ասում էր մայրը քնաթաթախ:

Ո՞րտեղ, Արշակը բերանը դրել է բարձին եւ իր լացն է շարունակում: Մայրը իր սրտին կպցրեց նրա գլուխը, սկսեց քորել եւ քաղցր խօսքեր ասել.

—Լա՛ւ, ինչ արել ես, պրծել ես, նաւթ չունինք, ես էլ չեմ՝ խօսում, ինչո՞ւ չես լռում...

Այդ խօսքերից Արշակն էլ աւելի տարաւաւ, էլի բարձր հեկեկաց:

—Աստւած կորի քնումիւնդ, բարկացաւ մայրը.

Առէք, կերէք այս է մարմին իմ:

—Մի խօսք ասացի, հարիւր տարի չըպիտի լոի:

—Ես դրա համար չեմ. լաց լինում, խօսեց Արշակը եւ արտասուքները կուլ տուաւ:

—Էլ ի՞նչ կայ:

—Թուղթս պրծել է...

Նրեխան էլ չըկարողացաւ խօսել, արտասուքը շոռաց նրա աչքերից:

—Վո՜յ, կուրանամ ես... Եւ մայրը ծիծաղեց, սկսեց նրան սիրտ տալ թուղթը մոռացնելու համար:

—Ի՞նձ համար թուղթ ա՛ռ, նանիկ. թուղթ եմ ուզում:

Չորս անգամ այս խօսքերը կրկնեց երեխան:

—Ի՞նչ անեմ, Չանիկ մատաղ, ո՞րտեղից տամ... Մի քան էլ չի մնացել որ ծախեմ, առնեմ... այն սեւ տախտակն ես ուզում ամեն օր... Մի հաւ ունինք... թէ ձըծախեմ... Ի՞նչ անեմ...

Արշակը մօր արտին կպաւ, էլ չըխօսեց, նա իմացաւ թէ ինչ պիտի անէ: Տունը լոյս լինէր, նա վեր կըկենար, պար կըգար: Կոյր հայրը, որ այդ խօսքերի ժամանակ զարթել էր, մի քանի անգամ ախ քաշեց, Աստուած կանչեց: Մարդ ու կնիկ մի երկու խօսք ասացին, քայց Արշակը չըլսեց թէ ինչ ասացին: Նրա միտքը ուրիշ տեղ էր:

III.

Կէսօրից անց էր: Շուկայում էլ տեղ գցելու տեղ չըկար. լաւ էր որ չէին շշկլտում այնքան ձղձղոցից, բղբղոցից: Վաճառողները շատ էին շատացել եւ կոկորդ էին պատռում, էլ ձայն, խօսք չէին խնայում, որ շատ քան վաճառեն:

—Օհո՛, օ՜, տարէք, տարէք, քաւում էր ձկնավա-

ճաղը եւ թելքերը մինչեւ արմունկները ծալած՝ ճուկ էր կոտորում:

—Արդար իւղը պրծաւ, էլ չի մնում, կանչում՝ էր միւսը ուրիշ ճայնով:

—Ձո՛ւ, ճո՛ւ, էժան, նոր ճո՛ւ...

—Լա՛ւ քրինձ, լա՛ւ քրինձ... էժան եմ՝ տալիս, հայ-քրիստոնեայ, տար, Զատիկդ առանց փլաւի չանես, գոռում՝ էր շուկայի մէջտեղ կանգնած մանրավաճառը:

—Քի՛չ մնաց, քիչ, վերջացրէք, ձեզ մատաղ, մենք էլ հայ-քրիստոնեայ ենք, մենք էլ ժամ պիտի գնանք...

Այս էլ նոր պանիր ծախողն էր կանչում:

Մի տեղ էլ քաղցրավաճառն էր մի խումբ մարդ հաւաքել իր գլխին. նա սպիտակ սեղանի վրայ դարսել է՝ տեսակ-տեսակ թխուածքներ, կարմիր սպիտակ հացեր, պաստէներ, որոնց գլխին խաչեր էին ցցած, փոքրիկ, շինծու զառներ, գոյն գոյն նախշած ձւաններ:

Ո՛ր մէկից առնես, ո՛ր մէկը թողնես: Ամեն մարդ հէնց այդ էր իրանից հարցնում՝ եւ դէս ու դէն էր վազում:

Այդքան խառնուած մարդկանց մէջ, այդքան աղմուկ-աղաղակի մէջ եկէք տեսնենք Աբշակին: Շատ ճարել չի կարելի, հարիւր ու մի երեխաներ են վազում, որը ճու է խաղում, որը մի քան է տուն տանում, որը խաղում՝ է: Ահա Աբշակը նստած է այնտեղ, մեծ խանութի կողքին, մի քարի վրայ եւ իր հաւն է խոտել: Շատ մարդիկ են անցնում՝ նրա մօտով եւ ոչ ոք չի կարող իմանալ թէ այդ երեխան էլ հաւ է ծախում: Ինչպէս իմանան: Նա անդադար խաղում՝ է հաւի հետ. գլուխը կախ արած, ճեռքը նրա կատարն է քաշում, երկու ոտներիցը բռնում՝ է, իր զբղում՝ պատկեցնում, խօսում՝ է նրա հետ, բռնում՝ է

կառուցը, գլուխը ալինդ իր երեսին է կպցնում, կամ նրան այնպէս է հուպ տալիս, իր կրծքին կպցնում, որ հաւը սկսում է ճղճղալ:

Մի մի նրա մօտով անցնում էին կանաչ-կարմիր, գնդեցիկ շորեր հագած երեխաներ. մի երկուսի հետ ծառան տանում էր փոքրիկ, սիրուն գառնուկներ, որոնց սպիտակ ճակատները կարմիր գոյնով էին ներկած: Արշակը դրանց նայում էր եւ էլ աւելի ալինդ էր իր սրտին կպցնում իր դէղին, ճղճղան հաւը:

Պա՜հ... զի՜նգ... լսուեց զանգակի առաջին ձայնը: Եկեղեցու զանգակն էր, թաղախման ժամը սկսում էր: Արշակն այդ ձայնը լսելուն պէս տեղից վեր թռաւ, հաւի գլուխը քունից եւ նրա կառուցը պաչեց: Դժուար բան էր հաւը տանելը... իր պատռած, կարկատած թևերով աչքերը սրբեց եւ գնաց, մարդկանց մէջ մտաւ: Քիչ դէս ու դէն ման եկաւ. վերջը սիրտը տւաւ, կանգնեց մի շատ շատ հարուստ մարդի մօտ, որ նայում էր մարդկանց, առնողներին եւ ծախողներին: Արշակը քունից նրա փէշը, ձգեց: Հաստլիկ հարուստը յետ նայեց եւ տեսնելով երեխային, կռացաւ, իր ականջը մօտեցրեց, որ լաւ լսէ թէ նա ինչ է ասում:

—Հաւը ծախում՞ եմ է՞, ասաց Արշակը եւ ուղիղ հարուստի երեսին նայեց: Բոլորովին չէր վախում:

Հարուստ մարդը հաւն առաւ նրա ձեռքից, նայեց փորին, ձեռը տւաւ մէջքին, կրծքին, ծանր-ծանր թևեվեր արաւ;

—Իմ հաւն է, սովորած է, դռնից չի փախչում, ասաց Արշակը,—իրիկունը շատ ուշ է թաւ գնում, սովորել է:

—Լաւ, քանի՞ ես ասում, լակոտ, հարցրեց հարուստը:

—Չի՛, փողով եմ ծախում, մի քարէտախտակ պիտի առնեմ, որ ընկերներից յետ չըմնամ:

—Գլխիդ տուր, ինչ ուզում ես ամ, բայց ինձ ասա, գինը որքա՞ն է:

Ի՞նչպէս վատ էր խօսում այդ հարուստը, բայց Աբշալը իսկի չէր էլ իմանում թէ ինչ է նա ասում, նրա մի ձեռքը դեռ հասի վրայ էր:

—Գինը քսան եւ հինգ կոպէկ է, ասաց նա:

—Ինչո՞ւ այդքան թանգ, լակոտ դեռ այդ հասակումն ես ուզում մարդ խաբել...

—Չէ, լաւ հաւ է, մեզ համար 32 ամէ է ածել, հիմայ մեր ամանում շատած են այդքան ձւանները:

—15 կոպէկ տամ, հարցրեց հարուստը, հասը Աբշալին տալով. սա էլի խատեց հասը եւ էլ չզգիտէր թէ ինչպէս խօսէ:

Հարուստը երեսի փոշմանեց իր ասածից, էլի հասն առաւ երեխայի ձեռքից, մէկ էլ նայեց, ծանր-թեթեւ արաւ եւ ապա գրպանից 20 կոպէկ հանելով, տւաւ Աբշալին:

—Չէ, սա քիչ է, անա այնտեղ Սարգիսը մի քարէ տախտակը 25 կոպէկով է ծախում:

Էլի երկար խօսեցին: Հարուստը ուզում էր 20 կոպէկով առնել, Աբշալը 25 կոպէկ էր ասում, Սարգիսի անունն էր տալիս:

Վերջապէս հարուստը ապիտակ կոպէկանոցը զօռով ճիտեց Աբշալի բուռը, մի հատ սեւ կոպէկ էլ աւելացրեց եւ հասը նրա ձեռքից խլելով, գնաց: Բայց Աբշալը գնաց նրա ետեւից. նրա լացը, գալիս էր, բայց լաց չեղաւ եւ մի տեղ կանչեց նրա ետեւից.

—Չէ, քիչ է, էլ տուր...

—Կորի՛ր, լակոտ, շուն... եւ հաստլիկ հարուստը այնպէս բարկացած ոտը գետնին խփեց, որ Աբշալը փախաւ:

Փախաւ, գնաց մանրավաճառ Սարգսի մօտ: Նրա

հետ էլ երկար խօսեց եւ, վերջապէս, յաղթեց. քարէտախտակն ու քարէգրիչը առաքաւ, բոլոր փողը տուաւ. իսկոյն իր անունը գրեց տախտակի վրայ, ջընջեց, մէկ էլ գրեց: Չէ, շատ լաւն է...

Այնուհետեւ ևկ, Արշակին տեսː

Ինչպէս է նա տուն վազումː... Թռչում է, ոստոստում է, քարէտախտակը ձեռքին խաղացնում է, գլխին է դնում, շուռ է տալիս, նայումː նայում է, չի կշտանումː

Մի տեղ մի քանի երեխաներ շրջապատեցին նրան իրանց կարմիր ձւաններըը նրա բթի առաջ քունեցին, երեսանները սրբելով ուզում էին նրան քարկացնել, ասելով թէ իրանք այդպիսի ձւաներ ունին:Բայց Արշակը չկուզեցւեց. ինքն էլ իր քարէտախտակը քունեց, վրան մի երկու բան գծեց, ինքն էլ նրանց վրայ ծիծաղեց եւ փախաւ:

Տաղ ասելով տուն մտաւ: Այդ ժամանակ նրա քոյրը եկեղեցի էր գնումː Ջատկի համար քոյրը հագուստ չունէր. միայն մի չթի նոր աղուխ կար նրա գլխին, այդ էլ մայրն էր այդ օրւայ իր արած լւացքի վարձ առացել: Մայրը Արշակին առաց որ նա էլ գնայ եկեղեցի, բայց Արշակը չլսեց նրան: Ի՜նչ եկեղեցի գնալ. Արշակի ուզածն այդ չէր... Նա նստեց իր քարէտախտակի հետ, էլ ձեռք չէր վերցնումՙ այդ սեւ տախտակից. ինքն իր հետ խօսում էր, զանազան բաղդը բաներ էր ասումՙ եւ իսկոյն գրումՙ տախտակի վրայ, ջնջումՙ, ուրիշ բան գրումː

Եկաւ իրիկունը, թաթախման իրիկունը: Քաղաքի մէջ քանի՜ քանի մարդիկ լէզք էին անումՙ, համեղ կերակուրներ էին ուտումՙ, ուրախ ու զւարթ ծիծաղումՙ էին: Եօթն շաբաթ պաս էին պահել այդ երեկոյի համար. չէ՞ն մոռայ Աստծու տունը, ուտումՙ էին, վայելումՙ, ուրախանումː

Արշակենց տանն ամենքը սուս ու փուս նստած էին: Հաց էին ղրել, մի քանի հատ էլ կարմիր ձու ունէին: Էլ ուրիշ բան չկար նրանց սեղանի վրայ, ղեղին հատը իր լաւութիւնն էր արել, յետոյ ծախք զընացել. նրա արածն այնքան մեծ բան էր, որ այդ խեղճ հայ-քրիստոնեաներն ղրած ղիրքը կատարեցին, թաթախեցան, պատները քացին:

Մենակ մի մարդ կար այդ տանը, որ մոռացել էր թաթախումն: Դա Արշակն էր. նրա քաժին երկու հատ կարմիր ձուն դեռ այնպէս մնում էին. նա հաց էլ չէր ուտում: Գիրքը ղրել էր հացի վրայ, քարէտախտակը երկու թևի արանքում էր ղրել եւ գրում էր: Նաւթը էլի քիչ էր կանթեղի մէջ, բայց այս երեկոյ նա երկար չընստեց: Վերջացրեց իր գործը, տեղից վեր թռաւ եւ հիացած կանչեց.

—Ուխա՛յ, ինչ լաւ գրեցի...

Գրածը տարաւ իր ծնողների մօտ, ցոյց տուց մօրն ու քրոջը: Մայրը տեսաւ, ուրախացաւ, գնեց իր կոյր մարդու ձեռից եւ ասաց.

—Այնքան լաւ գրել է երեխան...

Խեղճ կնիկը կարդալ չգիտէր, բայց ուրախացաւ, խեղճ կոյրն էլ ուրախացաւ: Արշակը գրածը կարդաց եւ այդ ժամանակ տան մէջ գտնուած երեք հոգին քահ-քահ ծիծաղեցին, համբուրեցին Արշակի ճակատը, մի քանի անգամ կրկնել տւին գրածը: Զաւիկն այս տունն էլ ուրախութիւն բերաւ: Արշակն իր տախտակի վրայ մեծ տատերով գրել էր եւ կարդում էր.

„Քրիստոս յարեաւ ի մեռելոց:“ ՂԷՕ



ԱՆԱՀԱՏ

Արի՛, գնանք, բարեկամ,
Ստաղարթագեղ զով անտառ,
Ազատ կրծքով օդ շնչենք,
Մոռանանք մեր վիշտն հազար:

Տե՜ս տեղ որքան սիրուն է
Նրա յատակ քնութիւնն.
Որքան անուշ, ախորժ է,
Կանաչ ծառի ստուերն:

Եւ ծառերը պատուած են
Ամեն գոյնի ծաղկունքով,
Ողջ անտառը լցւել է
Նրանց անուշ բուրմունքով:

Կանաչագեղ տունկերը
Ծառի ընին են հասել,
Զոր ծառերը, քարերը
Կանաչներումն կորել:

Ահա այնտեղ քարափից
Թաւալւում՝ է աղբիւրակ,
Նա յստակ է, նա չինչ է,
Անմահական, սառնորակ:

Քաղցրախօսիկ թռչնակներ
Գեղգեղում՝ են ու սուլում,
Ծառից ծառիկ թռչելով
Միմեանց զգւում, համբուրում:

Այնտեղ չրկայ պահապան—
Հակող ձեռքեր զազրելի,
Անդորը է կեանքն այնտեղ,
Ոչ ոք կարայ արգելի...

Գնանք, գնանք, բարեկամ,
Մեր վշտերն ամոքենք,
Ճնշած սրտերն, մեր հոգին
Այն անտառում՝ բժշկենք...

ՍՐԻՆԳ.

Տասնամեայ Յոսէֆ ախպարը կոմպոզիտոր Գոմէշին։

ՓԱԿԱԾ ԾԱՂԻԿԸ

Ա.

Արեգին անունով մէկ երիտասարդ ծաղիկներ շատ էր սիրում: Նա պանդխտութեան մէջ իր միխիթարանքը գտնում էր նրանց ընկերակցութեան մէջ: Անշուք սենեակում՝ կամ ամանների մէջ նա տեղաւորել էր մի քանի ծաղիկների տեսակներ, եւ ամենայն սիրով խնամք էր տանում նրանց վրայ: Ծաղիկներն էլ երիտասարդի աշխատութեան եւ սիրոյ փոխարէն տալիս էին գոյնզգոյն ծաղիկներ անուշ ու դուրեկան հոտով:

Բայց ինչ որ անակընկալ դէպքից այդ երիտասարդը զրկուեցաւ իր պաշտօնից եւ մի քանի ամիս պարապ մնալով, հարկադրուեց այդ ծաղիկները վաճառել, պահելով միայն նրանցից մէկը։

Նա տեղափոխուեց ուրիշ տուն իր հետ տանելով եւ այդ ծաղիկը։ Այդ սենեակն անշուք եւ մութն էր, այնպէս որ արեւի ճառագայթներն ամբողջ օրը չէին թափանցում սենեակի ներսը։ Գարեգինի սիրտը սկսեց անհանգստանալ, երբ տեսաւ իր ծաղիկն էլ իր նման տխրել է եւ այլեւս ծաղիկ չէ տալիս, այլ ամբողջ օրը տերեւները դարձրած դէպի արեւելք՝ ուզում է պատուհանից դուրս պրծնել. բայց երբ տեսնում էր՝ իր յոյսը ի դերեւ էր լինում, նա ողջ օրը հետեւում էր արեւի ընթացքին եւ երեկոյեան զլուխը թեքում էր դէպի արեւմուտք։ Իսկ առաւօտեան կրտեսնէիք դարձեալ նրա տերեւները եւ զագաթն ուղղած դէպի արեւելք։

Գանդուխտ Գարեգինը օրւան մեծ մասը տանն էր անցկացնում. նա ընկնում էր անկողնի վրայ եւ մտածմունքներում կորչում. անէծքներ էր թափում անգութ մարդկանց վրայ, որոնք հարստահարում են միմեանց եւ զրաստի նման բանեցնում իրանց ստորադրեալներին առանց նրանց պահանջմունքներին բաւականութիւն տալու...

Նա երբ այդ մտածմունքներից սթափւում էր եւ նայում իր տխուր ծաղկին, սիրտը ճաքում էր, տրտնջութիւնը կրկնապատկւում...

—Գարունն եկաւ եւ անցաւ, սակայն իմ ծաղիկը չբացւեց... Երբեմն նա այն եզրակացութեան էր գալիս, թէ երեւի, իր ծաղիկը զրկւել է ածելու, բեղմնաւորելու ընդունակութիւնից. բայց այդ եզրակացութիւնը շուտով չքանում էր, երբ մտածում էր որ իր

ծաղիկը դեռ մի քանի տարեկան է եւ չի կարելի այդպէս շուտով նա դադարէը ծաղիկ տալուց: Մի օր նա մինչեւ անգամ վճռեց ծաղկին իր կաւէ ամանով դուրս շպրտել փողոց, բայց կրկին մի ներքին զգացմունք Գարեգինի ձեռքը բռնեց թէ՝ դա անմոռութիւն է, նա հօ քեզ վնաս չի տալիս... նա քեզանից հաց ու շոր չի ուզում, թող հանգիստ...

Նա էլ թողեց:

Բ.

Այդ դէպքից անցել էր մի տարի եւ կրկին գարուն էր: Գարեգինը վաղուց լաւ պաշտօն էր ստացել եւ այժմ տեղափոխւել էր աւելի յարմարաւոր սենեակ: Նա կրկին չէը մոռացել իր ծաղկին տեղափոխելու այդ սենեակը, որն իր տխուր ժամերին այնքան իրան մոտատանջութեան մէջ էր ձգել: Պէտք է ասել, որ ծաղիկն համարեա թառամելու վրայ էր. նրա տերեւները սկսել էին դեղնել, իսկ քնի կեղեւն կուչ էր եկել, որ շատ նմանութիւն էր ստեղում հիւանդոտ մարդին, որի կաշւի տակից ոսկորներն երեւում են...

Նա սկսեց մեծ խնամք տանել, որ մի կերպով նրան կենդանացնի. տակի հողը փոխեց, փուչփուչացրեց, ճիճուներին կոտորեց, որոնք արդէն բուն էին դրել նրա արմատների մօտ: Այդ բաւական չէ, մինչեւ անգամ նրա տերեւների եւ քնի վրայ օրական մի քանի անգամ՝ շուր էր սրսկում՝ կարծելով թէ դրանով ծաղիկը կըվերակենդանանայ... Երբ մոտաքերում՝ էր նրա հոտաւէտ ծաղիկները՝ նա զմայլում՝ էր, եւ ափսոսում՝ էր նրան ոչնչացնել. նա հազարաւոր ծաղիկների մէջից էր ընտրած եւ ազնւագոյն տեսակից էր...

Վերջապէս նա ձեռք վերցրեց այդ ծաղկից.

բայց այնքան քարի նման, որ նրան ղէն չընձգեց, այլ թողեց, որ քաղցրովին մեռնի, չորանայ՝ յետոյ ղէն ձգի:

Մի կիրակի օր Գարեգինը գնաց ժողովատեղ եւ մի շատ սիրուն ծաղիկներով զարդարուած կաէամանի առաւ, որոնց ոտների վրայ այս եւ այն կողմից քազմաթիւ կիսաբաց կոկոններ կային: Նա ուրախ ուրախ նրան իր տանով բերեց դրեց պատշգամբում: Թառամող ծաղիկը սեւնեակումն էր՝ զրկուած արեւի ճառագայթներից, դրան էլ բերեց նրանից մի փոքր հետու դրեց, որպէս զի նրա հիւանդութիւնից նորն էլ չվարակուի:

Գարնանային թարմ արեւի անուշ ճառագայթներն ուղղակի ընկում էին այս ծաղիկների վրայ եւ միայն երեկոյեան վերջալուսին անհետանում էին: Թառամող ծաղիկը հէնց առաջին օրից կենդանութեան նշոյլներ ցոյց տուեց. նա զարթնացաւ, տերեւները նապաստակի ականջների նման խլրշեցին...

Գարեգինը այդ դեռ չէր նկատում. անցան երկու երեք օրեր, նա թողեց իր դեղնած տերեւները եւ հազաւ կանաչ եւ մատղաշ տերեւներ: Մի երկու շաբաթ... եւ նա բռնեց կոկոններ եւ զարդարուեցաւ կարմիր ու շքեղ, հոտոտ ծաղիկներով:

Վերջապէս Գարեգինը տեսաւ այդ եւ ուրախութիւնից քացագանչեց.

—Օհ, աննման ծաղիկս կենդանացել է...

Նա համբուրեց ծաղիկներից եւ սկսեց սիրով խնամել նրան: Նա մոռացաւ նոր առածին, որովհետեւ ամենայն կողմից այն ծաղիկը նրան գերազանցում էր, բայց երբէ նա հաճախանաք քոյրերի լեզուն, կըլսէը այս խօսքերը, որ շշնջում էր ծաղիկը.

„Սիրելիս, քաւական չէ ինձ ջրել ես կաւէ ա-

մանի մէջ, ոտներս-արմատներս կապել ես, դու ինձ անընդհատ էլ փակում ես, զրկում արեւի լոյսից, թողնում միմիայն մէջ, օրս խաւարացնում... Թող եղբայր, այստեղ՝ պարզ եւ ազատ օդի մէջ, շնչեմ հովասուն զեփիւռ եւ վայելեմ ազատ կեանք: Փաթաթեմ ճյուղս եւ չերմ արեգակի ճառագայթներին, այն ժամանակ տեսնես ինչ հոտաւէտ եւ հիասքանչ ծաղիկներով կզարդարինեմ քո սէրը եւ աշխատութիւնը„...

ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆ

ՄԱՀԱՆԱՔ

Քանի՛ քեզ, անհոգ մահուկ,
Դու անարձակ, դու դևո անքի՛ծ,
Դևո չըքացած զանճ ես ծածուկ,
Մաքուր շող ես զարնան երկնից:

Դու հաւատով դիմում ես կեանք,
Եւ սպասում ես երջանկութիւն.
Եւ քեզ համար կեանքի տենչանք
Որպէս մի վարդ կամ երգ սիրուն:

Դու չգիտես թէ ինչ վշտեր
Ծոռումում են սիրող հոգին,
Դու չես տեսնում թէ ինչ փշեր,
Բուն են դրած վարդի միջին:

Դու կըտանջւիս եւ կ'իմանաս,
Ինչ է կեանքի դառն արտասուք,
Կանցնեին օրեր, եւ վերահաս
Կը գայ թախիծ, սիրուն մահուկ...

Բայց եւ դարձեալ քեզ երանի՛,
Դու ապրում ես,—ես ապրեցայ.
Դու դևո զարնան այգ գեղանի,—
Իմ վերջալոյսն մօտ է արդ...

Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՒԳԼԱՍ

Ա

Գեռևից քառասուն տարի առաջ Ամերիկայի ահագին ագարակների վրայ աշխատում էին գերի նեգրները, որոնք քամրակ եւ շաքարեղեգն էին ցանում ու պատրաստում: Հարուստները խիղճ եւ պատիւ չընդունելով, աշխատում էին միայն փող դիզել իրանց համար: Նրանք առնում էին այդ թշուառ սեւերին գերեվաճառներից, քոնում էին նրանց ինչպէս կենդանիներին, շղթայակապ գցում շոգենաւը, որտեղ տաճեռակները նրանցից մեռնում էին վատ սնունդից եւ ապականուած օդից շնչասպառ էին լինում: Ամուսիններին բաժանում էին իրարից, զաւակներին ծնողներից, ծախելով նրանց զանազան անճնաւորութիւնների վրայ: Սեւերը ընկնելով նոր տէրերի իշխանութեան տակ՝ ամբողջ օրն աշխատում էին քամրակի դաշտերի վրայ եւ մի փոքր անզգուշութեան համար հարուածում էին ահագին փայտերով: Ծեծում էին մինչեւ անգամ այն սեւին, որ յոգնած լինելով, մի րոպէ դադարում էր աշխատելուց, եւ մի փոքր ազատ շունչ էր ուզում քաշել: Աշխատանքից յետոյ երեկոյեան նրանց փակում էին համբարանոցում գիշերելու, ինչպէս անասուններին: Մի հնչին յանցանքի համար գերիները

ենթարկում էին ամենածանր պատժի: Դժւար կը գտնուէր մի նեգր, որի մարմնի վրայ կապոյտ շերտեր չըլինէին: Գերիներն երբեմն փորձում էին փախչել այս սարսափելի կեանքից: Բայց տէրերն ունէին շների վոհմակները, որոնց վարժեցրել էին մարդորսութեան համար եւ այդպիսի դէպքերում ուղարկում էին մարդկանց հետ փախչողի յետեւից եւ հեշտութեամբ գտնում ու աւելի ծանր պատժի էին ենթարկում նրանց: Տէրը կարող էր մինչեւ անգամ սպանել իր գերիին. ոչ ոք իրաւունք չունէր նրանից հաշիւ պահանջելու: Եթէ մէկի գլխում կըծագէր այդ անել դրութիւնից ազատուելու միտքը, նա ենթարկւում էր անողորմ հարչարանքների եւ մինչեւ անգամ նրան սպանում էին, որպէսզի միւսների միտքն էլ չըփոխէ:

Ահա այդ ժամանակ, մօտ եօթանասուն տարի առաջ, մէկ նեգրուհի ծնաւ մի տղայ: Տէրը այս բանը լսելով շատ ուրախացաւ, որովհետեւ նրան աւելացաւ եւ մի ուրիշ գերի, որին ոչինչ չըպէտք է վճարէր. բայց որպէս զի մօրը չըխանգարէ գործի ժամանակ, նորածին մանկան տարան իր տատի մօտ, որ ապրում էր ուրիշ ագարակում 15 վերստ հեռու նրանից: Դժւար էր խեղճ մօր համար դաժանել իր երեխայից, բայց ի՞նչ արած, հակառակւել անկարելի էր: Երբ հնար էր լինում, նեգրուհին գնում էր իր մանկանը տեսնելու, բայց այս ուրախալի րոպէները շատ քիչ էին պատահում, որովհետեւ գործն չափազանց շատ էր եւ այս ճանապարհորդութիւնը նա գիշերներն էր անում, զրկելով իրան հանգստութիւնից: Հասնելով երեխայի մօտ քոլորովին յոգնած, ուրախանում էր զգւելով եւ փայփայելով իր տղային. նա քոլոր յոգնածութիւնը մոռանում էր, քանի համբուրում էր իր գիրկն առած մանկան: Բայց այս ուրախ րոպէներն

արագ էին անցնում: Նա կրկին եւ կրկին համբուրում էր իր երեխային, սեղմում էր իր կրծքին եւ բաժանում նրանից, չիմանալով թէ էլ ե՞րբ պիտի կունենայ նրան կրկին տեսնելու:

Բայց շուտով այս միակ ուրախութիւնից էլ զրկեցին: Նրան տեղափոխեցին մի ուրիշ ագարակ, որն աւելի հեռու էր եւ անկարելի էր առաջուայ պէս գիշերը ոտքով գնալ որդուն տեսութեան: Ոչոք չըխղճաց նրան եւ չըմոռացեց մայրական զգացմունքի վրայ: Եւ ով պէտք է խղճար, քանի որ բոլորն էլ այնպէս էին նայում թշուառ սեւերին, ինչպէս անասուններին. նրանք զուրկ էին սարդկային զգացմունքներից եւ ստեղծուած միայն նրա համար, որ մինչի մահ ծառայեն իրանց անգութ տէրերին:

Այնուհետեւ մայրն էլ որդու երեսը չըտեսաւ:

Երեխան մեծանում էր եւ զարգանում: Նա շատ ուժեղ, խելօք եւ աչքաբաց տղայ էր, նրանում նըշմարւում էր ամեն քանի ուսումնասիրութեան եռանդը. ամեն քանի վրայ ուշադրութիւն էր դարձնում; ամեն քան ուզում էր հասկանալ. նա շուտ շուտ դիմում էր իր շրջապատող մարդկանց՝ խնդրելով որ իրան բացատրեն այս ու այն երեւոյթները. բայց այդ գերիները կամ չըգիտէին ինչպէս բացատրել, կամ վախենում էին քան ասել, որ պատժի չենթարկուէին, որովհետեւ տէրերը խիստ հսկողութիւն էին անում, որպէս զի իրանց գերիները ոչ մի հարցով չըհետաքրքրուեն, դատողութիւն չանեն, որ նրանց միտքը չըբացւի, որովհետեւ նրանք լաւ իմանում էին, որ մտաւոր զարգացածներն էլ չեն կարող այնպէս անտրտունջ տանել գերութեան ծանր լուծը: Փրեդերիկը, այսպէս էին երեխին կոչում, ութ տարեկան էր, երբ նրա մայրը մեռաւ, հեռու իր սիրելի որդուց, չըտե-

սած իր որդուն մահուան գոնեա վերջին օրը:

Ծանր է երբ մէկը թողնում՝ է իրանից յետոյ մի թանգագին արարած եւ որին նոյնպէս վիճակւած է ապագայում՝ ծանր աշխատանք եւ թշւառ կեանք: Երեւի այս միտքը շատ էր գրաղեցրել թշւառ մօրն իր մահուան րոպէին: Ոչ ոք նրա վրայ չարտասւեց. նա ընկած էր անտէր, անխնամ՝ մի փտած հասիրի վրայ, երը վերջապէս գերիներից մի քանիսը տարան ու որին իր յաւիտենական քնակարանի մէջ: Որդին մեծանալով, երբէք չէր կարող գտնել մօր գերեզմանը, որ կարողանար աղօթել գոնէ նրա գերեզմանի վրայ:

„Երեւի նա անյայտացել է խոր ծովի մէջ ճանապարհորդութեան ժամանակ,—այսպէս է գրում՝ Փրեդերիկ-Դուգլասը իր կենսագրութեան մէջ—ոչ ոքի յայտնի չէ թէ որտեղ է գտնւում՝ իմ մօր գերեզմանը: Եւ ի՞նչ հարկաւոր էր մահարձան կամ՝ մի խաչափայտ կանգնացնել մի գերուհու գերեզմանի վրայ“:

Բ.

Փրեդերիկը շատ ուշ իմացաւ մօր մահը. ոմն էր մոռացում՝ նրա վրայ թէ՝ այս ինչ գերին վախճանւել է եւ հարկաւոր է որդուն տեղեկացնել. երեւի րոլորովին աւելորդ էին համարում՝ մոռացելով, որ նեգրներն ոչ ծնողք պէտք է ունենան եւ ոչ մայրական զգացմունք:

Փրեդերիկի տիրոջ աղջիկը մի անգամ՝ տեսնելով նրան՝ շատ հաւանեց նրա ճարպիկութիւնը եւ հասկացողութիւնը: Այդ աղջիկը նշանւած էր եւ շուտով պէտք է պսակւէր, այդ պատճառով նա խնդրեց հօրը՝ որ փոքրիկ Փրեդերիկ գերին իրան ընծայէ: Հայրը համաձայնւեց եւ նրա հարսանիքից յետոյ Փրե-

դերիկը տեղափոխեց իր նոր տիրուհու տունը: Երիտասարդ տիկինը շատ քաղցր ու խոհեմ էր վարւում իր փոքրիկ ծառայի հետ, զւարճանում էր նրա սրբամիտ պատասխաններով եւ առհասարակ վարւում էր նրեխայի հետ ոչ այնպէս, ինչպէս վարւում էին միւս տէրերը իրանց գերիների հետ: Տիկինը նրա վրայ չէր նայում ինչպէս մի անզգայ կենդանու վրայ, այլ համարում էր նրան ինչպէս մի մարդ իր նման եւ նրա հետ մարդավարի էր վարւում: Այդպիսի հանգամանքը գերատիրոջ աղջկայ կողմից շատ տարօրինակ կրթւէր միւս տէրերին, որ մնծացել էր քրոնական կալւածների մէջ, եւ որոնք պատրաստ էին արհամարհել այդպիսին իրանց երկրից եւ մինչեւ անգամ սպանել նրան, ում որ կը համարձակւէր ասել թէ՝ գերին էլ մարդ է: Եւ հետեւաբար հարկաւոր է նրա հետ վարւել ոչ այնպէս, ինչպէս մարդու, այլ ինչպէս մի անբան կենդանու հետ: Այդպէս մտածող մարդկանց վրայ գերատէրերը նայում էին ինչպէս իրանց ոխերիմ թշնամու վրայ:

Փրեդերիկը շնորհիւ իր քաղի տիրուհու, քաջամտութիւն էր կազմում Ամերիկայի բոլոր գերիների մէջ: Նա այնքան զարգացաւ, որ արդէն զգաց թէ ո՞րքան ստորութիւն է գերի լինելը եւ որ ոչով իրաւունք չըպէտք է ունենայ ազատութիւնը խլել իր նման մարդուց եւ ծառայեցնել նրան ինչպէս անասուն: Նրա քաղի տիկինը տեսնում էր այն բոլոր տանջանքները, որ կրում էին նեգրները եւ շատ խղճում էր այս անօգնական արարածներին: Նա չէր կարող օգնել այս բոլոր թշւառներին, թէեւ ամեն կերպ աշխատում էր: Փրեդերիկը բոլոր ծառաներից մօտ էր նրան, միայն իրան էր ծառայում, այդ պատճառով կարողանում էր ազատ պաշտպանել նրան: Երիտասարդ

տիկինը իր պաշտպանութիւնը հասցրեց մինչեւ այն կէտին, որ վճռեց իր փոքրիկ գերիին գիր կարդալ սովորեցնել, որ այն ժամանակ խիստ արգելւած էր:

Մէկ անգամ երբ տիկինը գրքեր էր կարդում, Փրեդերիկը անհանգիստ էր: Նա երկար նայում էր, մինչեւ տիկինը նկատեց նրան եւ ժպտալով հարցրեց.

—Ի՞նչու ես ինձ այդպէս նայում:

—Դժւարը է գիր սովորել, հարցրեց Փրեդերիկը, փոխանակ նրա հարցին պատասխանելու:

—Ոչ, դժւար չէ, ինչո՞ւ ես հարցնում:

—Այնպէս հարցրի:

—Դու ուզո՞ւմ ես գիր սովորել, շարունակեց տիկինը իր հարցմունքը, նայելով տղային, որ հետաքրքիր եւ ագահ աչքերով նայում էր գրքի վրայ:

Փրեդերիկի աչքերը փայլեցին ուրախութիւնից եւ շտապով պատասխանեց. „Ո՛հ, այո՛, այո՛, ես շատ կըցանկանայի գիր սովորել“:

—Որ այդպէս է՝ սովորիր:

—Բայց ով կըսովորացնէ ինձ, ասաց տղան տըխուր ձայնով:

—Ես, պատասխանեց տիկինը:

—Դո՞ւք, բացագանչեց տղան, զարմացած նայելով իր տիկնոջ, կարծես չէր հաւատում իր ականջներին:

—Այո՛, ես:

—Դուք երեւի հանապ էք անում, ասաց Փրեդերիկը, դարձեալ չըհաւատալով այս անսպասելի ուրախութեանը:

—Ոչ, ես ամենեւին հանապ չեմ անում եւ եթէ ուզում ես՝ հէնց այս:օրւանից կըսկսենք:

Փրեդերիկն ուրախութիւնից բռնեց տիկնոջ ձեռքը եւ ծածկեց համբոյրներով: Նրա ուրախութիւնը

այնքան անկեղծ էր եւ դէմքը այնպէս էր փայլում ուրախութիւնից, որ երիտասարդ կնոջ աչքերը լցուեցան արտասուքով՝ նա էլ ուրախ էր, որ կարողացել էր իր զոհին ուրախացնել: Փերդերիկն աշխատասէր եւ ընդունակ տղայ էր եւ ուսումն էլ յաջողութեամբ էր ընթանում: Այս բանը ոչոք չգիտէր, եթէ իմանար՝ հետեւանքը վատ կլինէր, այս պատճառով տիկինը զաղտնի էր նրա հետ պարապում:

Փերդերիկն արդէն սկսել էր ազատ կարդալ, երբ անակնկալ հանգամանքը արգելք եղաւ վարժուհու եւ աշակերտի դիտաւորութիւնն իրագործելու: Մէկ անգամ երբ Փերդերիկը պարապում էր իր տիկնոջ հետ՝ յանկարծ տուն մտաւ վերջինի ամուսինը. նրանք այնպէս ուշադրութեամբ էին պարապում, որ չընկատեցին թէ մէկը նրա մտաւ:

Ամուսինը տեսնելով թէ բանն ինչումն է, երեսը բաց մնաց. նա զարմացած եւ վախեցած նայում էր մերթ կնոջ, մերթ Փերդերիկի վրայ: Երբ նրանք նկատեցին մտնողին, արդէն ուշ էր, զաղտնիքը բացուել էր: Տիկինն ամօթից խոնարհեցրել էր աչքերը, կարծես նրան վրայ էին հասել մի մեծ յանցանք գործելիս, իսկ Փերդերիկը սարսափած իր պարոնի անսպասելի յայտնութեամբ՝ զոնում էր կիսամեռ դրութեան մէջ:

—Այդ ինչ կընշանակէ, վերջապէս արտասանեց պարոնը, հազիւ իրան զսպելով:

—Գիր էի սովորեցնում, պատասխանեց կինը, շտապելով աչքերը վեր բարձրացնել:

—Դու խելագարուե՞լ ես, ի՞նչ է, ուզում ես քեզ էլ ինձ էլ ոչնչացնել. գիր է սովորեցնում: Տէր Աստուած. այդ էր պակաս, կորիր այստեղից, անասուն, ես քեզ լաւ գիր կըսովորեցնեմ:

Փրեդերիկը շտապով դուրս փախաւ սենեակից:

—Նա մեղաւոր չէ , ասաց կինը:

—Ես զարմանում եմ թէ ինչպէս յոյսաւ դրա գլխում գիր սովորելու միտքը. այդ տղան երկիւղալի է, դրանից բարիք չի գալ, նրան պէտք է ուշադրել, թէ չէ՝ էլ ոչ մի գիշեր հանգստութիւն չեմ ունենալ:

—Ես քեզ ասում եմ որ նա մեղաւոր չէ, ասում էր կինը, ես առաջարկեցի, նա էլ ուրախութեամբ ընդունեց:

—Բայց մի՞թէ դու չգիտէիր, որ մինչեւ անգամ օրէնքով արգելւած է մեր գերիներին կարդալ սովորացնելը:

—Ես կարծում էի՝ որ ոչով չի իմանալ:

—Այդ աւելի վատ կըլինէր եթէ չիմացւէր, դրանից յետոյ դու յանձն կառնէիր եւ մէկ ուրիշին էլ սովորացնել եւ այդպիսով կարող էիր քոլորիս կոտորման պատճառ դառնալ:

—Թո՛յլ տուր միայն Փրեդերիկին սովորացնեմ:

—Ո՛չ, ոչ, դու Փրեդերիկին էլ տեսնելու չես:

—Ի՞նչ պէտք է անես նրան:

—Նա կըլինի ուրիշ գերիների հետ եւ կըշինէ այն, ինչով նրանք են շինում, իսկ քեզ երբէք չի ծառայիլ:

(Կըշարունակւի)

Թարգ. ՕՐ. Մ. ՍԵՐԵԲՐԱԿԵՆՑ



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. վ. Սահակեան

1) Երկու վանկով վեց տատ ունիմ,
Ամեն անկիւն նստած եմ,
Ոչ ոսկի եմ եւ ոչ գոհար,
Բայց ամենից էլ թանգ եմ:

Եւ չըմոռանաք որ ամենքը
Ինձ յարգում են հաւասար,
Զար թէ բարի, մեծ թէ փոքր
Իմ փայլին են սիրահար:

Ինձ կըգտնէք ամենքի տան,
Բազմած բարձր սեղանին.
Բայց առաւել սիրանի եմ
Ես մթին ու գիշերին:

Երբ հաւասար ինձ կէս անէք
Առաջին վանկս միայնակ,
Տաճկաստանում—կարնոյ մօտիկ
Ընկած եմ լուռ, անխօսնակ:

—Վերջին վանկով ես տալիս եմ
Երկրագործին աշխատանք.
Որով եւ նա ամբողջ տարին
Պիտ սահպանէ իր օր, կեանք:

Երբ եզները չուխտակ լծած՝
Աշնան կալն են տրորում,
Այնուհետեւ երկրագործը
Ինձանով է զբաղւում:
Ապա գուէք, ժիր մանուկներ,
Ի՞նչ է անունս, ի՞նչ եմ՝ ես.
Եթէ գտաք իմ՝ գանձերից
Առատ բաժին կըտամ՝ ձեզ:

—

2) Այն ի՞նչն է,
Փետուրով կըցանեն,
Աչքով կըքաղեն,
Իսկ գլխով կուտեն,
Մտրով կըմարսեն:

—

3) Այն ինչ է.
Ինքն անտեսանելի,
Ձայնը լսելի:

—

Խ Ն Դ Ի Ր.

45-ից հանել 45, որ մնացորդը լինի դարձեալ 45:

—

Շ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Շուտը ծռին քնում է սովորեցնում:

—

Նախընթաց № 3-ի հանելուկների բացատրութիւնը. — 1) Ինքնահոս. 2) Թուզ. 3) Հեռնեք և ոռնեք իրանց մատներով: 4) Երկաթուղի:

Խմբ.-հրատար. Տ. Նազարեան

Дозволено цензурою, Тифлисъ, 1891 г. 9-го Апрѣля

Типографія „Ароръ“ Т. Я. Назарьянъ, угол. Головин. пр. Барят. ул.

ՁԻՄԱՇՀԱԼԻՔ

ԱՐՕՐ

Գեղարուեստական տպարանի

Մատուցի տուկ ևն

Ա.

ԵՂԻՇԷ

Աշխարհաբար թարգ. Հ. ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ

—

Բ.

ՍՐԲՆԴԻ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

—.

Գ.

Թժշկապ. Դ. ՅԷր-Գրիգորեանց Թիֆլիսցի

ՀԱՆՐԱՄԱՏՋԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆ

Ա. ՀԱՏՈՐ

—

Դ.

I. ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂԲԱՏ

II. ԳԻՒՂԱԿԱՆ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ

АРОРЪ

художественная

ТИПОГРАФІЯ

ред. иллюстриров. журнал.

„Агбюръ“ и „Таразъ“

Въ Тифлисѣ

(Уг. Голов. пр. и Барят. ул.)

печатаетъ на **русскомъ**, Тузем. и *европейск.* языкахъ *КНИГИ*, **ГАЗЕТЫ**, ЖУРНАЛЫ, **БЛАНКИ**, **КОНТОРСКІЯ КНИГИ**, ВИЗИТНЫЯ КАРТОЧКИ. Пріемъ всевозможныхъ типографическихъ работъ, **приготовленіе клише для иллюстрацій.** Печатаніе монограммъ для писемъ и пр.

Ձերկայ մայիս-յունիս ամիսներում լոյս կը տեսնեն

ՍՐԲՆԴԻ — ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆԻ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ եւ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1880—1890

II. *ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ 1884—1889*

III. *ՓՈՔՐԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ*

Պատկերազարդ մանկական վէպ:

Այս երեք հրատարակութեան գինն է մէկ րուբլի:

Դիմել Тифлисъ. Аршаку Меграбянъ Въ конторѣ Ред. „Агбюръ“.

Հոյս տեսաւ

ԱԼԻՔՍԱՆԴՐ ՅԱՏՈՒՐԵԱՆԻ

„ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“

Գինն է 50 կոպեկ

Ծանրագրարհամայնով 60 կոպեկ: Յանձնագրուներդ դիմումով ինդիանկին հետևեալ հասցեով. Москва, Газетный пер. д. Лианозова, въ типографію М. Бархударова.

Ի Է Ո

ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ

Ժողովրդական վէպ քննադատութիւն վաճառւում է „Աղբիւրի“ գրասենեակում եւ Թիֆլիսի գրավաճառների մօտ:

Գինը 15 կոպ.

Уроки армянскаго языка, армянской исторіи и исторіи армянской литературы. Спросить въ конторѣ редакціи „Агбюръ и Таразъ“.

ՇԱՐԱԽՆԱԿՆՈՒՄ Է 1891 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐԱԶ

Ամսագիր յատկացած

Գեղարուեստ.—գրական-երգիծաբ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Հայ ամսագաստանում ցանել գեղեցկի եւ բարւոյ սերմեր ու արմատախիլ անել տգեղ եւ չար որոմն, ահա Տարազի նպատակը:

ԴԵՂԱՐՒԵՍՏ՝ լինի նա արտայայտուած քանաստեղծի վառ շրթունքով, նրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ տրոփացնող վիպագրի գրչով Տարազում առաջին տեղը պիտի բռնէ: Քննադատութիւն մեր նորօրեայ կեանքի՝ լինի նա արտայայտուած վէպով, պատմուածով, փէլիետոնով, թէ կատակով Տարազի գրական մասը պիտի կազմէ:

Տարազի մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի եւ թէ անցած գնացած, գլխաւորապէս մեր կեանքից:

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ եւ գիտութիւն. Պատմական եւ ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրւածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն եւ կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն եւ տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ թատրոն: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդւածներ եւ այլն: Փէլիետոն ծաղր, առած, կատակ: Շախմաթի եւ այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհուրդներ: Այլեւայլք, պատասխաններ, յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթերի տարեկան բաժանորդագինը 6 րուբլի է, արտասահմանի համար 7 ր. (20 ֆր.) առանձին №№ 25 կ.

Հասցէն՝ Тифлисъ, ред. иллюст. еженед. журн. „Таразъ“ կամ՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „Taraz“.

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Միամսեայ հրատարակութիւն երեխաների եւ դաստիարակների համար:

Աղբիւրի առաջին պրեմիան է մի գեղեցիկ օգտագրւածքիս ԱՆԱՆԱՍԿ ՈՐԴԻՆ խոզ պրեմիացնելիս:

Աղբիւրի Բ. պրեմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Գէորգ Բաշինջաղեանի ԱԼԱԶԱՆԻ ՀՈՎԻՏՆ մեծադիր եւ շքեղ ձիթանկարը վիճակ կրգդի բաժանորդների մէջ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին.

Աղբիւրի Գ. պրեմիան զանազան 1892 թ. համար դեկտեմբերի №-ի հետ կուղարկուի մի պատկառելի եւ մի գրպանի փորրիկ օրացոյց: Բացի դրանցից, տարւայ ընթացքում կատուքարիկին համերգներ, ներկայութիւններ ոչնչից առաջին վճռողները կրստանան միւսներից.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) *Վէպեր, վիպերգակներ, պատմուածքներ, նկարագրութիւններ, կենսագրութիւններ.*

II) *Բանաստեղծութիւններ.*

III) *Դիտողութիւն եւ արձակ.*

VI) *Հետաքրքրիր տեղեկութիւններ*

V) *Այլ եւ այլք.*

ՉՐԱՐԱԿԱՆ

VI) *Մանկական, փրկերեզական, շախմաթի եւ այլ խաղեր, ռեբուսներ, թուաբանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ՝ շուտասաչելուկներ.*

VII) *Երգեր նոտաներով.*

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) *Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդւածներ ոչ տեղեկութիւններ.*

IX) *Առաջարկութիւններ, յորդորներ*

X) *Մատենաբանական նշանակոր գրքեր.*

XI) *Խառն ոչխար.*

Պատասխաններ. Յայտարարութիւններ.

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. 28 կ. իսկ արտասահմանի համար ալբէմիաներով 4 ր.

Հասցէն՝ Тифлисъ, ред. Агбюръ кам Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ